ՀԱՎԵԼՎԱԾ 2

Գնահատման չափորոշիչներ

Դիմումների գնահատումն իրականացվում է 100-բալանոց համակարգի հիման վրա՝ համաձայն հետևյալ աղյուսակում ներկայացված չափանիշների.

Չափանիշ	Բովանդակություն	Առավելագույն միավոր
1. Նախաձեռնության համապատասխանությունը ծրագրի նպատակներին	Նախագիծը ուղղակիորեն և արդյունավետ կերպով նպաստում է ծրագրի հիմնական նպատակներին՝ հողային ռեսուրսների կայուն կառավարմանը, էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանմանը: Այն հստակորեն կապվում է ծրագրի տրամաբանական շրջանակում սահմանված արդյունքների և ցուցանիշների հետ և իրականացվում է ԿԲԹ-ների և ԿՏԹ-երի թեժ կետերի շահառու բնակավայրերում:	30
2. Իրականացվելիություն և տեխնիկական իրագործելիություն	Նախագծի նպատակները իրատեսական են և հասանելի: Գործողությունների պլանը մանրամասն է, ժամանակացույցը՝ իրատեսական:	15
3. Շահառուների և համայնքի ներգրավվածություն	Նախագիծը ներառում է տեղական համայնքի, շահառուների և գործընկեր կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը նախագծման և իրականացման փուլերում: Կա համաֆինանսավորման կամ ներդրման (ինչպես ֆինանսական, այնպես էլ նյութական/աշխատանքային) ապացույց:	15

Չափանիշ	Բովանդակություն	Առավելագույն միավոր
4. Կայունություն և երկարաժամկետ ազդեցություն	Նախագիծն ունի շարունակականության հստակ պլան՝ ներառյալ տեղական սեփականության ապահովում, կառույցների ստեղծում/ուժեղացում, կարողությունների զարգացում և/կամ եկամուտ ստեղծելու մեխանիզմներ: Հայտատուն սոցիալապես խոցելի խմբերից է կամ նախագիծը նպաստում է սոցիալապես անապահով խմբերի վիճակի բարելավմանը:	30
5. Նորարարական մոտեցումներ և բարդ խնդիրների լուծում	Նախագիծն առաջարկում է ստեղծագործական, նորարարական կամ հարմարեցված լուծումներ տարածաշրջանում առկա բնապահպանական խնդիրների համար: Ցուցադրում է բարձր ազդեցության ներուժ՝ համեմատաբար ցածր ներդրմամբ:	10
Ընդամենը		100